

Ջրառատ

Վարչական ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան

Հեռ 093704077

Մակերես՝ 56.2կմ²

Բնակչություն՝ 1026

jrarat.shirak@mta.gov.am

Գյուղը նախկինում անվանվել է Զրախլի , որը թարգմանաբար նշանակում է «լույսով լի »: 1945 թ վերանվանվել է Ջրառատ :

Գտնվում է Փամբակի լեռնաշղթայի Հարսնաքար /2483մ/ լեռնաճյուղի արևմտյանլանջին, Ջրառատ գետի վերին հոսանքի ավազանում, ծովի մակերևույթից 1900մբարձրության , Ախուրյանից 16 կմ , Գյումրի քաղաքից 20 կմ մայրաքաղաքից135կմ հեռավորությունվրա: Գյուղը հիմնվել է 1828 -

1829 թթ Ալաշկերտի գյուղերից գաղթած բնակիչների կողմից :Գյուղի առաջին հիմնադիրը եղել է Ալաշկերտից գաղթած Մեսեն անունով մի բնակիչ , որը ըստ տեղացիներին հասած ավանդության , բնակավայրի տեղը հավանել է որպես իր այծերի համար հարմար արոտավայր : Գյուղի բնակիչները 1918-

1920 թթ , փորձ ենարել զինված դիմադրություն ցույց տալ թուրքերին , սակայն անկարող են եղել մինչև վերջ դիմադրել:Թուրք բարբարոսները 1920 թ Շիրակի դաշտավայրի բնակչության մի մասին կոտորել են և ավերակներ են լցնելով Համբարենց տուն կոչվող շինության մեջ կենդանի այրել են : Գյուղի բնակիչները մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին , /գոհվել են97-ը / և Արցախյան ազատամարտին / 1 զոհ / :1965 թվականին կառուցվել է1920 թ անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանըորը Եղեռնի զոհերի 100ամյակի կապակցությամբ վերակառուցվում է համայնքի կողմից:Գյուղի հնաբնակների վկայությամբ , իր հիմնադրման օրվանից գյուղն ունեցել 1800ական թվականների սկզբներին ծնված Քյալաշ ամի անունով փահլեվան, որն ապրել է մոտ 100 տարի:

Մի անգամ գյուղ են եկել աղքատները , փահլեվանըմատնացույց է արել իրենց տունը , որտեղ մայրը թոնիրով գաթա թխելիս է եղել, երբ նրանք հետ են վերադարձել փահլեվանը տեսել է ,որ աղքատներին գաթա չեն տվել ջրաղացի քարը տարել դրել է թոնիրի բերանինև ամբողջ գաթան այրվել է : Համայնքը սահմանակից է Բասեն ,Փանիկ,Գեղանիստ գյուղերին: Ջրառատհամայնքի վարչական տարածքը կազմում է 5622.18հա, որոնք օգտագործվում են որպես գյուղատնտեսական նշանակության հողեր ` 5288,07 հա/վարելահողեր ` 1328,74 հա, խոտհարքեր` 523,97 հա , արոտավայրեր` 3330,04 հա , այլ հողեր ` 105,32 հա /, արտադրական նշանակության հողեր ` 21,87 հա, էներգետիկական նշանակության հողեր ` 3,99 հա , հատուկ պահպանվող հողեր 119,49 հա:

Կլիման լեռնատունդրային է , ցրտաշունչ 5-6 ամիս տևողությամբ ձմեռներով , ձնաբքերով , սառնամանիքներով, ուժեղ քամիներով,հիմնական ձնածածկույթով , հունվարի միջին ջերմաստիճանը կազմում է-8 աստիճանից -10 աստիճան , նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև - 36աստիճանի:

Իսկ ամառները զով են , գերիշխում են հյուսիս-արևելյան քամիները , հուլիսի միջին ջերմաստիճանը կազմում է +6 աստիճանից մինչև +14 աստիճան, առավելագույն ջերմաստիճանը հասնում է մինչև +28 աստիճանի: Տարեկան տեղումների քանակը կազմում է 600-900 մմ:

Բնակչությունը միատար է , կազմում է մոտ 1300մարդ :

Ծնունդով Ջրառատ գյուղից ենթշկական գիտությունների թեկնածու Չախոյան Ալեքսանդր Ալեքսանդրի: Մանկարդյունաբերության /լոռի պանիր / ակադեմիկ Քերոբյան Արարատ Հակոբի: Համայնքում գործում է Ջրառատի միջնակարգ դպրոցը 120 աշակերտ տեղով :

Ջրառատում չկա ոչ մի մշակութային, մարզական հաստատություններ ինչպես նաև արտադրական ձեռնարկություններ:

Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու հողագործությունն է :

Գյուղում պահպանվել է 6րդ դարում կառուցված , դրսից ուղղանկյուն գմբեթատակ ունեցող եռախորան սբ Մինաս եկեղեցու ավերակներ որի բեմի առջևի նախախորանի խաչաթևերը դրսից հյուսիսից , հարավից և արևելքից վեցանիստ են : 19րդ դարում շինությունը հյուսիսային մասից լրացվել է ուղղանկյուն պատերով իսկ արևելյան մասը լրացվել է խորանով և ավանդատներով : Եկեղեցու ներսի պատերին երևում են որմնանկարների հետքերը: Գյուղից արևելք հայտնաբերվել է 10-20րդ դարերի Ծաղկասար գյուղատեղին և նույն դարերի <<Թուխ Մանուկ>> մատուռը: Հայտնաբերվել է նաև Ք.ա 2-1-ին հազարամյակների կիկլոպյան ամրոցի մնացորդներ: Գյուղից 2-3 կմ դեպի հարավ–արևելք 1940-1950 թթ լքված Խանվալի գյուղի ավերակներն են, որի հողատարածքները ` հավանաբար ինչպես և հնում , օգտագործվել են որպես ամառանոցներ և արոտավայրեր : Պահպանվել է հիշյալ գյուղի գերեզմանոցը : Գյուղի օտարալեզու Խանվալի անվանումը հուշում է , որ տարածքը հնում եղել է հայկական բնակավայր , որը 13-19 րդ դարերում լքվել է բնակիչների կողմից և այնտեղ բնակություն հաստատած թուրքալեզու ցեղերը հավանաբար իրենց խանի պատվին այն անվանել են Խանվալի: 1928-1930թթ գյուղում նորից բնակություն են հաստատել հայ ընտանիքներ , որոնք սակայն 1950–ական թվականներից սկսած նորից լքել են բնակավայրը ` բնակլիմայական պայմանների , բնակավայրերից և բանուկ ճանապարհներից հեռու լինելու պատճառով:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Ջրառատ